ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՀՌՑ-ԷԱՃԱՊՁԲ-26/3 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով վառելիքի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի բացման, գնահատման և ամփոփման նիստի

ք. Երևան

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 15.09.2025թ. ժամը 12:00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահող՝ Ռ. Աֆանդյանը
Անդամներ՝ Դ. Հակոբյանը

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Ավագյանը
Բացակայում է Է. Ջաղացպանյանը

1. Տեղեկություն հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին

Էլեկտրոնային աճուրդի eauction.armeps.am կայքի միջոցով հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել ս.թ. սեպտեմբերի 12-ը, ժամը 10:00-ը: Հակադարձ աճուրդը կայացել է ս. թ. սեպտեմբերի 15-ին ժամը 10:00-10:30 ժամանակահատվածում:

2. <u>Հանձնաժողովը արձանագրեց.</u>

Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները, տվյալները

N	Մասնակցի անվանումը	Գործունեության հասցեն, էլ. փոստի հասցեն	Հեռախոսահամար	ՀՎՀՀ
1	ՖԼԵԾ ՍՊԸ	ք. Երևան, Ե. Կողբացու 30 flashltdtender@gmail.com	+374 10 53 42 33	01808789

<u>3. Մասնակցիցների առաջարկած գները ըստ չափաբաժինների</u>

Չ/հ	Անվանում	Քանակ	Տեխնիկական բնութագիր
1	բենզին, ռեգուլյար	25000 լիտր	Արտաքին տեսքը՝ մաքուր և պարզ, օկտանային թիվը որոշված հետազոտական մեթոդով՝ ոչ պակաս 91, շարժիչային մեթոդով՝ ոչ պակաս 81, բենզինի հագեցած գոլորշիների ճնշումը՝ 45-ից մինչև 100 կՊա, կապարի պարունակությունը 5 մգ/դմ3-ից ոչ ավելի, բենզոլի ծավալային մասը 1 %-ից ոչ ավելի, խտությունը՝ 15°C ջերմաստիճանում՝ 720-ից մինչև 775 կգ/մ3, ծծմբի պարունակությունը՝ 150 մգ/կգ-ից ոչ ավելի, թթվածնի զանգվածային մասը՝ 2,7 %-ից ոչ ավելի, օքսիդիչների ծավալային մասը, ոչ ավելի՝ մեթանոլ-3 %, էթանոլ -5 %, իզոպրոպիլ սպիրտ-10%, իզոբուտիլ սպիրտ-10 %, եռաբութիլ սպիրտ-7 %, եթերներ (C5 և ավելի)-15 %, այլ օքսիդիչներ-10 %, անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2004թ. նոյեմբերի 11-ի N 1592-Ն որոշմամբ հաստատված «Ներքին այրման շարժիչային վառելիքների տեխնիկական կանոնակարգի»:) Մատակարարումը՝ կտրոններով) Ապրանքի որակի սերտիֆիկատի առկայությունը պարտադիր է) Բենզին Ռեգուլյարի կտրոնները պետք է ունենան Պատվիրատուի պահեստ մուտքագրելու պահից առնվազն 1 տարվա ժամկետ: Ժամկետի լրանալուց 2 օր առաջ հնարավոր լինի կտրոնները փոխարինել նոր կտրոններով, որոնք կգործեն առնվազն 1 տարի ժամկետով: Կտրոնները պետք է սպասարկվեն ք. Երևանում (յուրաքանչյուր վարչական շրջանում առնվազն մեկ բենզալցակայան), ՀՀ բոլոր մարզերում, յուրաքանչյուրում առնվազն 2 բենզալցակայան:) պետք է ներկայացնի ապրանքի մասով ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվություն Պարտադիր պայման է հանդիսանում վառելիքի լցակայանների առկայությունը Երևանի Նորք-Մարաշ համայնքում, ինչպես նաև մյուս համայնքներում, ՀՀ մարզերում՝ Կոտայքի, Լոռու, Տավուշի, Շիրակի, Գեղարքունիքի, Վայոց Ձոր մարզկենտրոններում, Սյունիքի Սիսիան, Գորիս, Կապան և Մեղրի տարածաշրջաններում: Մասնակիցը պետք է տրամադրի տեղեկատվություն ապրանքային նշանի, ապրանքանիշի և արտադրողի մասին, իսկ պայմանագրի կատարման փուլում՝ որակի վկայական:

Հ/հ	Անվանում	Քանակ	Տեխնիկական բնութագիր
2	դիզելային վառելիք, ամառային	2000 լիտր	Դիզելային վառելիք , կտրոններով, Ցետանային թիվը 51-ից ոչ պակաս, ցետանային ցուցիչը 46-ից ոչ պակաս, խտությունը 15 0 C ջերմաստիճանում 820-ից մինչև 845 կգ/մ3, ծծմբի պարունակությունը 350 մգ/կգ-ից ոչ ավելի, բռնկման ջերմաստիճանը 55 0 C-ից ոչ ցածր, Ածխածնի մնացորդը 10% նստվածքում 0,3%-ից ոչ ավելի, մածուցիկություն ը 400C-ում՝ 2,0-ից մինչև 4,5 մմ2/վ, պղտորման ջերմաստիճանը՝ 0 0 C-ից ոչ բարձր: Մատակարարումը կտրոնային: Կտրոններն ուժի մեջ պետք է լինեն մատակարարման օրվան հաջորդող առնվազն 12 ամսվա ընթացքում և դրանք պետք է սպասարկվեն Երևանում (յուրաքանչյուր վարչական շրջանում առնվազն մեկ բենզալցակայան) և ՀՀ բոլոր մարզերում: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2004թ. նոյեմբերի 11-ի N 1592-Ն որոշմամբ հաստատված «Ներքին այրման շարժիչային վառելիքների տեխնիկական կանոնակարգի» Մասնակիցը պետք է տրամադրի տեղեկատվություն ապրանքային նշանի, ապրանքանիշի և արտադրողի մասին, իսկ պայմանագրի կատարման փուլում՝ որակի վկայական:

Չափա-բաժնի համար	Չբաղեց-րած տեղ	Ներկայացված հայտեր	Նախահաշվային գին	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ			Մասնակցի կարգավիճակ
				Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	
1	1	ՖԼԵՇ ՍՊԸ	12000000	10000000	20 %	12000000	10000000	20 %	**12 000 000**	
2	1	ՖԼԵՇ ՍՊԸ	980000	816666.67	20 %	980000	816666.67	20 %	**980 000**	

4. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

4.1 **Ֆլեշ ՍՊ ընկերության** կողմից ներկայացված հայտում առկա են ՀՀՌՑ-ԷԱՃԱՊՁԲ-26/3 ծածկագրով Հրավերով պահանջվող փաստաթղթերը և կազմված են **հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:**

5. Հանձնաժողովը որոշեց

5.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով՝ **Ֆլեշ ՍՊ ընկերության** կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար և վերջինիս 1, 2 չափաբաժիններով ճանաչել ընտրված մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ 2, դեմ 0

5.2 Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման մասին հայտարարության տեքստերը հայերեն և ռուսերեն լեզուներով / գեներացվում է Համակարգի միջոցով/:

Ընդունվել է որոշում՝ կողմ 2, դեմ 0

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետը՝ անգործության ժամկետ չսահմանել և **Ֆլեշ ՍՊ ընկերության** հետ կնքել պայմանագիր:

Հանձնաժողովի նախագահող՝ Ռ. Աֆանդյան

անդամներ՝ Դ. Հակոբյան

քարտուղար՝ Ա. Ավագյան